ՀԱՅԱԶԳԻ ԺԱՆ ԱԼԹԵՆԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ԵՎ ՏՈՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԵԿ

ԱՆՐԻ ՄԻՇԵԼ (ՄՈՆՊԵԼՅԵ)

XVIII դարում Լանգըդոկը դայթակղել է մի հայի, որն անվիճելիորեն իր տեղն ունի Լուսավորության դարի հայ վաճառականների պատկերասրահում:

Առեղծվածային ծագում, միմյանց հաջորդող ծրագրեր, որոնք նույնքան դրավիչ են իրենց մտահղացմամբ, որքան ձախողակ՝ իրենց իրագործման մեջ, և էպիզոդիկ ծանոթություններ ազնվատոհմիկ աստիճանավորների հետ, ինչը, շատ հաճախ, չի խանդարում, որ վարիճանը կիսով չափ անհայտ լինի: Ժան Ալթենի կյանքը զերծ չի մնացել այն տրաֆարետներից, որոնք «սնուցել են» XVIII դարի բազմաթիվ վեպեր, չնայած նրան, որ այն ուղեկցվել է իրական ջանքերով՝ Լանգրդոկ ներմուծելու համար բամբակի մշակությունը և Պրովանս կամ Ավինյոնի կոմսություն ներմուծելու տորոնի մշակությունը, ինչն ավելի լավ է հաջողվել:

Ժան Ալթենը ծնվել է 1709 թ. Հայաստանում, որտեղ նա, ըստ նրա կենսագիրների, դերի էր վերցվել պարսիկների կամ թուրքերի կողմից: Դոմինիկյան վանականների օգնությամբ ազատվելով դերությունից, նա Մարսել է հասել Ֆրանսիայի թագավորին պատկանող մի նավով, Մարկիզ գ'Անտենի հովանավորության շնորհիվ: Նա այստեղ է հասել 1733-ին կամ 1739-ին[1]: Մեկ կամ մյուս տարեթվի ճշտությունը ոչնչով չի հավաստվում, եթե ի նկատի ունենանք այն, որ Լանգրդոկի կառավարչի պահանջով կատարված առաջին հարցումը ի հայտ չի բերել նրա՝ Մարսելով անցած լինելու որևէ հետք[2]: Հավանաբար նա այստեղ ամուսնացել է (1741-ին): Կասկածից դուրս է, որ նա այդ ժամանակ, առանց հապաղելու, ձգտել է ֆինանսների ընդհանուր վերահսկողության աշխատակիցների ուշադրությունը հրավիրել բամբակի մշակության ասպարեզում իր ունեցած փորձի վրա, որը նա ձեռք էր բերել երիտասարդ ժամանակ, Փոքր Ասիայում: 1744 թ. սկզբից Լանգրդոկի իշխանություններն, իրոք, քննել են «այն առաջարկները, որ արվել են պ. ընդհանուր Վերահսկիչին Հոհաննիս Հայ անվանյալի կողմից՝ Լևանտում բամբակի սերմերը տնկելու մի փորձ կատարելու վերաբերյալ և այն խնդրանքի շուրջ, որ նա ներկայացրել է Կաստրի շրջակայքում մի քանի հողամաս վերցնելու նպատակով, որոնք, ինչպես

---

1 J. M a t h o r e z. Les Etrangers en France sous l'ancien Regime. T. 1, Paris, E. Champion, 1919, p 345. *Մաթորեզը հակվում է դեպի 1733 թ., նրան է հետևում նաև* A. R e m o n d. J o h n H o l k e r (1719–1786). Paris, M. Riviere et Cie, 1746, p. 35 n. 18. *Դրան հակառակ, դեպի 1739 թ.-ն է հակվում* P. M a s s o n. La Provence au XVIIIe s. Paris, Hachette, 1936, p. 136.

2 J. M a t h o r e z. Op. cit., p. 346.

նա է պնգում, հարմար են այդ բույսի մշակության համար»[3]: Սկզբնական շրջանում կառավարիչ Լը Նենը աջակցում է այս ծրագրին՝ նա գրում է Կաստր, որպեսզի Ժ. Ալթենին մի դաշա տրամադրվի՝ իր փորձերին նվիրվելու համար[4]: Մինչև մարտ ամսվա ավարտը գտնվել է մի փոքր հողամաս և ագարակի վարձակալության մասին մի փաստաթուղթ է ստորագրվել[5]: Սակայն այս վարչական աջակցությունն ունի իր սահմանները. որպեսզի այն շարունակվեր, անհրաժեշտ էր ֆինանսական օժանդակություն: Հայ դյուղատնտեսը սպառել էր իր բոլոր պաշարները. նրան պետք էր «500-600 լիվրի ավանս՝ գործը կարգի բերելու նպատակով», և հարկավոր էր նրան միջոցներ տրամադրել «Մարսել գնալու՝ վերցնելու համար բամբակի սերմը, որն ինքն այնտեղ էր թողել», ինչպես նա ասել է, գավառի կառավարչին՝ չկարողանալով, սակայն, նրան համոզել: Վերջինս, իրոք, խոստովանում է ֆինանսների ընդհանուր վերահսկիչին. «Այս խնդրանքն ինձ զարմացրեց, քանի որ նա ինձ առաջարկել էր այդ փորձը կատարել իր հաշվին, և ես չէի կարծում, որ, որքան էլ ես ցանկանայի օժանդակել նրա ձեռնարկման հաջողությանը, կհամարձակվեի նման մի կանխավճար տալ այնպիսի մեկին, որին բոլորովին չեմ ճանաչում, և որը ոչ մի գրավ չի տվել»[6]: Ինչպես շատ արկածախնդիրներ, Ժ. Ալթենը ևս մեկ հմայել է, մեկ անհանդստացրել: Այնուամենայնիվ, թերահավատությունը չի համակել իշխանություններին, որոնք, 1744 թ. վերջին նրան տրամադրել են «300 լիվրի նպաստ՝ որպես փոխհատուցում Կաստրի թեմում բամբակի պլանտացիաներին հատկացված հողերի հողահարկի գիմաց»[7]: Իրականում, չի թվում, թե Ալթենը երկար հետաքրքրված լինի բամբակի մշակության լանգրգոկյան իր առաջին փորձով: Մեկ տարուց էլ պակաս ժամանակ անց, լիազորված անձն իրոք բողոքում է կառավարչին նրա թվացյալ անտարբերությունից բամբակի բերքահավաքի նկատմամբ, թեև առաջին թեթև ցրտահարություններն, արդեն իրենց զգացնել էին տալիս Կաստրեում[8]: Ուստի զարմանալի չէ, որ Ալթենը հենց այդ ժամանակ՝ 1745 թ. վերջին կամ հաջորդ տարվա սկզբին, հաստատվում է Մոնպելյեում՝ առանց, այնուամենայնիվ, վերջնականապես հրաժարվելու իր «բամբակային» ծրագրերից:

Հաստատվելով վարչական կենտրոնում, նա իրոք շարունակում է իր փորձերը Սոնների արվարձանում գտնվող մի այգում՝ համոզված, որ այս շրջանին բնորոշ ավելի տաք կլիման և ծովային քամին ավելի նպաստավոր են այդ մշակաբույսի համար: Նա շարունակում էր իրեն ի վիճակի համարել ոչ միայն բամբակ արտագրելու, այլև «ցույց տալու այն մաքրելու, նրանից կտոր գործելու, մի խոսքով այն վաճառելի դարձնելու եղա-

3 Proces-verbal des Etats generaux de la Province de Languedoc, seance du 31 janvier 1744.

4 Montpellier, A. D., C 2629, Lettre de Cros Lamouzie a l'intendant, Castres, 14 mars 1744.

5 Ibid., Lettre de l'intendant de Languedoc au controleur general, 8 avril 1744.

6 Նույն տեղում:

7 Proces-verbal des Etats generaux de la Province de Languedoc, seance du 30 decembre 1744.

8 Montpellier, A. D., C 2629, Lettre du subdelegue a l'intendant, Castres, Ier dec. 1745.

նակը»: Շուտով նա մտադրվում է փորձնական փուլից անցնել արտադրական փուլին: 1750 թ. վերջին Գիտությունների թագավորական ընկերության Մոնպելյեի լիազորներն ընդունում են, որ Սոներիի արվարձանում նրա ցանած 6 ունցիա սերմից աճել է բամբակի 200 բույս: Հաջորդ տարի Ժ. Ալթենն ավելի մեծ ծրագրեր է կազմում և ամռան ընթացքում Լատտում, քաղաքի հարավ-արևելքից մոտ մեկ մղոն հեռավորության վրա, ցանում է 5-ից 6 ֆունտ սերմ, որով նրան ապահովել էր ընկերության առաջին նախագահ Բոնը: Երբ բամբակի իսկական պլանտացիա ստեղծելու ծրագիրն արդեն իրականացված էր, նա ձգտում է ամրապնդել ռահվիրայի իր դիրքը այդ բույսի մշակության ասպարեզում: Շատ չանցած ընդհանուր վերահսկիչից բացառիկ արտոնություն է խնդրում բամբակ տնկելու համար, նաև ֆինանսական օժանդակություն այն բոլոր ծախսերի համար, որ նա, ըստ իրեն, արել էր «ութ կամ ինը տարվա» ընթացքում: Մոնպելյեի Գիտությունների թագավորական ընկերությունը հաստատում է, որ Լատտում հավաքված բամբակը գերազանցում է Մոնպելյեում ստացված բերքին, և որ «այդ սերմը ոչ մի կերպ ենթակա չէ իր որակական հատկանիշները կորցնելուն»: Խորհրդակցելով ընդհանուր վերահսկիչի հետ, գավառի հոդաբարձուները, այնուամենայնիվ, զերծ չեն մնում իրենց վերապահությունն արտահայտելուց: Վերջինս վերաբերում էր ինչպես ստացվելիք արտադրանքի հաշվարկմանը, այնպես էլ «որևէ պատկերացման բացակայությանը՝ այն մշակաբույսերի հետ կապված ծախսերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ էին եղել սերմ ստանալու, դաշտը նախապատրաստելու և կամ բերքը հավաքելու համար»: Ուստի առանց դույզն իսկ ժխտելու «այն առավելությունները, որոնք բխելու էին բամբակ մշակել կարողանալուց, որը մեծ թվով ֆաբրիկաների համար գլխավոր հումքատեսակներից է», երեք հոդաբարձուները՝ Մոնֆերիեն, Ժուբերը և Լաֆֆաժը, գտնում են, որ պետք է փորձեր արվեն գավառի այլ վայրերում ևս՝ համոզվելու համար, որ արտադրանքն այդտեղ ևս առատ կլինի: Հակառակ գեպքում արդեն կատարված փորձերը «ըստ էության կլինեն սոսկ հետաքրքրասիրական մի նախաձեռնություն»[9]: Նրանք համաձայնվում են խրախուսել Ժ. Ալթենին 500 լիվրի մի նպաստով՝ փոխհատուցելու համար նախկինում արված ծախսերը և առաջարկում են նրա համար ապահովել մի նոր նպաստ՝ «նույն փորձը Նիմի հողում կամ Ադդի թեմում շարունակելու պայմանով»: Տնտեսական լիբերալիզմը մղում է նրանց մերժել Ալթենի պահանջած բացառիկ արտոնությունը, քանի որ «կարող էր նույնիսկ մի տեսակ հակասություն առաջանալ, մի կողմից, բամբակի պլանտացիաները հովանավորելու ցանկության և, մյուս կողմից, դրանցով զբաղվելու հնարավորությունը և դրանք գործածելու իրավունքը միայն մեկ անձնավորությամբ սահմանափակելու միջև»[10]: Լանգեդոկի կառավարիչը համամիտ էր հոդաբարձուների վերլուծությունների և եզրակացությունների հետ՝ Ժ. Ալթենը պետք է բազմապատկի իր փորձերը[11]: Ի վերջո, հաջորդ ամսին՝ 1752 թ. փետրվա-

9 Montpellier, A. D., C 5397, Lettre des syndics generaux de la province a l'intendant, Montpellier, 12 janvier 1752.

10 Նույն տեղում:

11 Ibid., Lettre du 28 janvier 1752 de l'intendant au controleur general.

ին, Արդարադատության մինիստրությունը 500 լիվրի նպաստ է հատկացնում Ժ. Ալթենին՝ Լևանտի երկրների համար նախատեսված հատկացումների ֆոնդից[12]: Չնայած այս օգնությանը, չի երևում, որ փորձերը երկարաձգված կամ շատ բազմապատկված լինեն: 1753 թ. ամռան վերջին, Թագավորական ընկերության հանձնաժողովը շարադրում է մի նոր զեկույց, հավանաբար վերջինը, Լատտի բամբակի պլանտացիաների վերաբերյալ: Առաջին փորձերն արթնացրել էին լուսավորյալ դյուղատնտեսների և բուսաբանների հետաքրքրությունը: Սակայն հաջորդ փորձերը, տարիների ընթացքում, չէին կարողացել համոզել վարչարարներին նրանում, թե դրանք իրենցից տնտեսական հետաքրքրություն են ներկայացնում: Թեև, մեկնարկելիս, Ժ. Ալթենը ջանք չէր խնայել՝ լավագույնս օգտագործելու համար այն բոլոր հաղթաթղթերը, որ կային իր տրամադրության տակ:

Անկասկած, նա հույս էր դրել նախ և առաջ իր հայրենակիցների համերաշխության զգացումի վրա Մարսելում և Փարիզում, գեպի ուր իր կատարած առաջին այցելությունների ժամանակ, օրինակ, նա իջևանել էր նրանցից մեկի՝ Շամմաս անունով մի անձնավորության տանը, որը ոսկերիչ էր Թագավորական Պալատում (Պալե-Ռուայալ)[13]: Նա շատ շուտ էր կարողացել իր երաղանքներին հազորդակից դարձնել մի քանի մինիստրների, որոնց թվում էին Օրրին, ինչպես նաև Տրյուդենը, որը, 1752 թ. սկզբին, նրա համար բերել տվեց 58 ֆունտ բամբակի սերմ[14]: Այս հզոր հենարանների շնորհիվ նա ընդունելություն դտավ Լանդրդոկում՝ կառավարչի և պետական ընդհանուր հոգաբարձուների մոտ: Սակայն նա չէր ղլանում թափանցել նաև նվաղ հեղինակավոր, բայց իր համար օգտակար օղակները, որպիսիք էին նախալեռնային քաղաքացիական թեմերի փոքրիկ վարչական կենտրոնների աղնվականները, որոնցից էր կառավարչի լիաղորված անձը Կաստրում, ինչպես և Ս. Պոնսի թեմի հարկահավաք Ար. Պրագալը, որին նա, մի քանի տարի անց, հանձնում է Դյուհամել դյու Մոնսոյի «Ուսումնասիրություն տորոնի մասին» երկը[15]: Թե՛ առաջիններին, թե՛ մյուսների մոտ նա կարողացել է ի նպաստ իրեն ծառայեցնել իր ժամանակին հատուկ կրքերը և նորույթները, իր ծագման էկզոտիկությունը, դյուղատնտեսությունը՝ իր փորձերի միջոցով, և տնտեսագիտությունը՝ շահույթի իր ներշնչած հույսերի միջոցով: Սակայն իր ժամանակակիցների ունեցած սպասելիքների նրա սուր զգացողությունը չի բավականացրել՝ համընդհանուր ճանաչման հասնելու համար: Ոչինչ չի կարող հակադրվել կլիմայական պայմաններին: Կառավարիչ Սեն-Պրիեստը շատ շուտ էր դի-

---

12 Ibid., Lettre du 16 fevrier 1752 de l'intendant a M. de Joubert, syndic general de la province.

13 J. M a t h o r e z. Op. cit., p. 336.

14 Montpellier, A. D., C 5397, Lettre de l'inspecteur du commerce a l'intendant du Languedoc, Marseille, 19 janvier 1752.

15 H.-L. D u h a m e l d u M o n c e a u. Memoires sur la garance et sa culture... Paris, Impr. royale, 1754, In4°, IV-80 p. *Խոսքը վերաբերում է Անդրե Պրագալին՝ Պիեռ-Ժան-Ժոզեֆ-Անդրե Պրագալին (1742-1824), որը նույնպես Սեն-Պոնսի թեմի հարկահավաքն էր: Վերջինիս մասին տե՛ս* H. M i c h e l. "Herault", in Grands Notables du Premier Empire, ss. dir. de L. Bergeron et de G. Chaussinand-Nogaret, t. 3, Paris, C.N.R.S., 1980, p. 151.

տակցել այդ: Նա պարզ արտահայտել է այդ ավելի ուշ իր հոբը դրած մի նամակում, նույնիսկ եթե նրա բացատրական վարկածներից որևէ մեկը սխալ է. «Պետք է եզրակացնել, որ կամ անհրաժեշտ ջերմության քանակը Լանգրդոկում բավարար չէ, կամ էլ լճակների տարածվածությունն ու ծովի հարևանությունը սառեցնում են շրջակայքի օդը և վնասում այդ բույսի աճին»[16]:

«Բամբակյա» երազանքի ձախողումը Ժ. Ալթենին ետ չի պահում գյուղատնտեսական և տնտեսական այլ ծրագրերից: Բամբակից նա անցնում է տորոնին և, ինչպես ինքն է խոստովանում, 1772-ին հասնում է հաջողության. «Պ. Ալթենը... Ֆրանսիայում հաստատվել է մոտ 30 տարի առաջ, և նույն այդ ժամանակվանից սկսած նա շարունակ ջանացել է տեղեկացնել իր գիտելիքների մասին՝ Լևանտի երկրների (ուր նա անց է կացրել իր կյանքի մի նշանակալի մասը) արտադրանքների և արհեստների վերաբերյալ. բամբակի մշակություն, այդ արտադրանքի մանում և դգում, արջասպ և, վերջապես, տորոն՝ նա հաջող փորձեր է արել այս բոլոր ուղղություններով..., սակայն, միջոցների պակասի պատճառով, նրա բոլոր փորձերը անօգուտ են եղել ինչպես հենց իր, այնպես էլ այն գավառների համար, ուր նա կատարել է դրանք, և նրա աշխատանքները բացարձակապես անպտուղ են մնացել, բացառությամբ տորոնի հետ կապվածների, որը ամենաօգտակար բույսերից մեկն է ներկարարների համար»[17]: Արդյունքը զարմանալի չէ, քանի որ այս մշակաբույսի համար պայմանները Ֆրանսիայում ավելի բարենպաստ են, քան բամբակի արտադրության համար: Կլիմայական «տրամադրության» վայրիվերումները և հողերի բնույթը բամբակամշակությունը ենթարկում են բացառապես ձախողվելու ռիսկին: Օժանդակությունը, որ նրան ցույց էր տալիս միապետական իշխանությունը, այդ ժամանակ հիմնվում էր մի օրենսդրության վրա, որը, Պետական Խորհրդի 1756 թ. փետրվարի 24-ի որոշման ընդունումից հետո, հարկերից ազատում էր ճահիճներում և չորացված հողերում բամբակ մշակողներին: Բացի այդ, Ժ. Ալթենը անձամբ կապ է հաստատել ներկարարների և մանուֆակտորների հետ՝ լավ ծանոթանալու համար նրանց տեխնիկային և կարիքներին, Մոնպելյեում՝ խոշորագույն ներկարարներից մեկի՝ Սենար-Պասկիեի հետ, և հատկապես Սեն-Շամոնի թագավորական մանուֆակտուրայի տնօրենի՝ Ժան-Կլոդ Ֆլաշայի հետ[18]: Լևանտի երկրներում՝ նախ և առաջ Կոստանդնուպոլսում, մոտ 1740 թ. որպես Լիոնի վաճառականների հյուպատոս, այնուհետև Զմյուռնիայում 1755 թ. ապրելուց հետո վերջինս վերադառնում է իր հայրենի քաղաքը՝ Սեն-Շամոն, իր հետ բերելով փոքրասիացի բանվորներ, և Ժ. Ալթենին ընդունում իր ձեռնարկությունը: Հաստատվելով Ավինյոնի կոմսությունում, ծագումով լևանտացին շարունակում է կապ պահպանել հոգով լևանտացու հետ, որը իր «Ուսումնասիրություն տորոնի մասին»-ում հիշատակում է Ֆրանսիայում այդ կուլտու-

16 Ibid., Lettre de L'intendant Saint-Priest a son pere, 22 mars (?) 1762 (?).

17 J. A l t h e n. Memoire sur la culture de la garance. Paris, Imprimerie royale, 1772. In-4°, 18 p., cf. m. 1 et 2.

18 *Սենար-Պասկիե ընտանիքի մասին տե՛ս* X. A z é m a. "Une famille de marchands-teinturiers aux XVIe et XVIIIe siecles: Les Senard-Pasquier", Bull. hist. De la Ville de Montpellier, 1986, p. 3-9.

բայի մշակության հաջողվելու միայն մեկ օրինակ, որն էլ հենց «Ժան Ալթենինն է՝ ազգությամբ լևանտացի, որը, իմ ֆաբրիկաներից դուրս գալով, հեռացել է Ավինյոն, պ. դը Կոմոնի մոտ»: Նրա պլանտացիաները, ավելացնում է նա, «այնպիսի մեծ հաջողություն ունեցան, որ ներկայումս տորոն են մատակարարում զանազան ֆաբրիկաների և հատկապես Օրանժի բամբակյա գործվածքների ֆաբրիկային»[19]: Ժ. Ալթենն իր «տորոնային» ձեռնարկումներում, է՛լ ավելի շատ, քան «բամբակային» փորձերի ընթացքում, կարողացել է ապավինել այնպիսի լուսավորյալ ազնվականների օգնությանը, ինչպիսիք էին մարկիզ դը Սեյտր դը Կոմոնը՝ Ավինյոնի կոմսությունում, և մարկիզ դը Կլոզոնետը Ֆուրքում՝ Ստորին Լանգրդոկում[20]: Այսպես, իր մահից (որը հանկարծակի վրա հասավ 1774-ին) երկու տարի առաջ նա հպարտությամբ կարող էր կազմել այն ներկատների ցուցակը, որոնք դտնվում էին իր վերահսկողության տակ ոչ միայն Ավինյոնի կոմսությունում՝ Իսլ-սյուր-Սորգում, Կարպանտրայում, Մոնտյոյում և Անտրեգում, այլև Պրովանսում՝ Առլում և Տուլոնում, ինչպես նաև Լանգրդոկում՝ Ֆուրքում[21]:

Հայկական սփյուռքը, այսպիսով, անծանոթ չի եղել Լանգրդոկին նախքան Ֆրանսիական հեղափոխությունը: Կրոնական պատճառները, միահյուսվելով տնտեսական շահերին, նպաստել են նրան, որ այստեղ հայեր են հայտնվել: Սակայն նրանց ներկայությունն այստեղ կրել է անկանոն և սահմանափակ բնույթ, թեև այն մեծարանքը, որին արժանացել է Ժ. Ալթենը, մոռացնել է տվել այդ[22]: Դա ամենևին էլ զարմանալի չէ: Հայերն այդ ժամանակ չափազանց փոքրաթիվ էին, որպեսզի լավ ներկայացված լինեին թագավորության բոլոր գավառներում: Պրովանսի քաղաքներից նրանք կարող էին մեծ թիվ կազմել Մարսելում, որի կապերը Լևանտի երկրների հետ ամրապնդվում էին XVII դ. վերջից սկսած: Այստեղ նրանց մրցակցությունը լուրջ էր: Լանգրդոկում, ընդհակառակն, հայերը գիտեին, որ այն շատ ավելի փոքր էր լինելու: Չնայած Սեթի նավահանդստի ստեղծմանը և, Կոլբերի օրոք, Երկու ծովերի ջրանցքի փորմանը, կյանքն այստեղ շարունակում էր գլխավորապես մայրցամաքային մնալ: Սակայն

---

19 J.-C l. F l a c h a t. Memoire sur la garance. Lyon, Les fr. Perisse, 1772. In-8°, 38 p., cf. p. 27. *Նա նաև հեղինակն է հետևյալ հետաքրքիր երկի՝* Observations sur le commerce et sur les arts d'une partie de l'Europe, de l'Asie, de l'Afrique, et...des Indes orientales. Lyon, Jacquenod, 1766, 2 vol. In-12°. *Ֆրանսիայում տորոնի մշակության այլ փորձերի մասին XVIII դ. տե՛ս* A.J. B o u r d e. Agronomie et agronomes en France au XVIIIe s. T. 2. Paris, S.E.V.P.E.N., 1962, p. 649 sq.

20 *Մարկիզ դը Կլոզոնետը եղել է Ֆրանսիայի մինիստր՝ Վուրտեբերգի դուքսի մոտ և Շվարենի ավազանում:*

21 J. A l t h e n. Op. cit., p. 2 sq.

22 *«Տորոնը* (Rubia tinctorum) *Եվրոպա է ներմուծվել մի հայի՝ Հովհաննես Ալթունյանի (Ժան Ալթեն) կողմից, որի պատվին հուշարձան է կանգնեցվել Վոկլյուզի շրջանում (Ֆրանսիա) և որի անունով այս բույսը կոչվել է* Althenie *ֆրանսիացի բուսաբան Պետիի կողմից»:* S h u s h a n i k K h a c h i k i a n. Typology of the Trading Companies owned by the Merchants of New Julfa, Iran and Caucasus. Vol. II, Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies, Tehran, 1999, p. I. *Հովհ. Արթինյան. Նոր Ջուղայեցի հայերուն առևտուրը ԺԷ դարուն.– «Անահիտ», Փարիզ, 1908, № 1-4, էջ 31-36. Ծանոթ. Շ. Խաչիկյանի:*

շարունակում էր ապրել հիշողությունը միջերկրածովյան Արևելքի հետ այս գավառի ունեցած երբեմնի կապերի մասին[23]: Տարեգրությունների հեղինակները, պատմաբանները և դրողները, շարունակում էին պահպանել այն: Այդպիսին էր, օրինակ, կանոնիկոս Պիեռ Գարիելը, որն իր «Գաղափար Մոնպելյե քաղաքի մասին» երկում հիշեցնում է, ոչ առանց խորին կարոտաբաղձության, այն ժամանակի մասին, երբ «մեր նավահանգիստների և մեր արտոնությունների փառքը... մեզ հնարավորություն էր տալիս առատորեն ունենալ այն բոլոր լավ բաները, որ անհրաժեշտ են կյանքի համար»[24]: Քաղաքային զվարճությունները հաճախ են նպաստում մոռացման դեմ ուղղված այս պայքարին: Մոնպելյեում, XVIII դ. սկզբին, դրան իրենց ուրույն մասնակցությունն են բերում Աղեղնախաղի ազնվականական ընկերության անդամները: Ամեն տարի նրանք շրջում են քաղաքով՝ «բոլորը երկու-երկու..., յուրաքանչյուրն իր կողքին ունենալով մի սպասավոր: Այդ սպասավորներից մեկը հագնված էր որպես լեհ, մյուսը՝ որպես մավր, որպես ենիչերի, որպես թուրք և որպես հայ, մի խոսքով՝ բոլորն էլ չափազանց արտասովոր և մաքուր...»[25]: Հայաստանը, նոր ժամանակաշրջանում ավելի քիչ ներկայացված լինելով Լանդրդոկի տնտեսական կյանքում, քան այդ եղել է միջնադարում, դրա փոխարեն իրական տեղ է գրավել լանդրդոկցու երևակայության մեջ:

АРМЯНИН ЖАН АЛТЕН — ИНИЦИАТОР ВНЕДРЕНИЯ КУЛЬТУРЫ ХЛОПКА И МАРЕНЫ ВО ФРАНЦИИ

АНРИ МИШЕЛЬ (Монпелье)

Резюме

Статья французского исследователя А. Мишеля посвящена жизни и деятельности Жана Алтена (Ованеса Алтуняна, 1709 — 1774 гг.) — неутомимого энтузиаста, экспериментатора и новатора в области сельского хозяйства во Франции в XVIII в. Уроженец Армении, где он был взят в плен турками или персами, Жан Алтен был затем вызволен из плена при помощи доминиканских монахов и прибыл во Францию на французском корабле в 1733 или 1739 г. Обосновавшись на юге Франции (в Лангедоке), он попытался внедрить выра-

23 *Մոնպելյեի մասին տե՛ս* A. G. G e r m a i n. Histoire du commerce de Montpellier..., Montpellier, J. Martel, 1851. 3 vol. in8°. W. H e y d. Histoire du commerce du Levant au Moyen-Age. T. I, Leipzig, 1885, p. 88. *Ժան Բոմելը բազմիցս նշում է այդ կապերի մասին՝* t. I, p. 84-86, t. 3, p. 204-267. J e a n B a u m e l. Histoire d'une seigneurie du Midi de la France. Montpellier, T. I, 1969, p. 84-86 *և* T. 3, 1973, p. 264-267.

24 P. G a r i e l. Idee de la ville de Montpellier, recherchee et presentee aux honestes gens..., Montpellier, D. Pech, 1665.

25 J.-F r. D u c h e de V a n c y. Lettres inedites..., Paris, 1830, p. 221, 1701 *թ. մարտի 2-ի նամակը: Այս ընկերության մասին տե՛ս* F. T r o a b a t. ...Le Noble Jeu de l'Arc a Montpellier (1411-1729). Montpellier, 1897, In-4°, 135 p.

щивание таких ценных сельскохозяйствнных культур, как хлопок и марена. Многолетние попытки по выращиванию хлопка не увенчались особым успехом из-за несоответствия климатических условий, однако марена прижилась великолепно, способствуя процветанию сельского хозяйства и мануфактурного производства южных областей Франции. Французский ботаник Пети назвал марену Althénie (по имени Жана Алтена). Благодарные жители области Воклюз во Франции воздвигли Ж. Алтену памятник, который стоит по сей день.